ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900 թւին հիմնուած Ազգագրական-Հրատարակչական ընկերակցութիւնը (товарищество) ցանկանալով ընդարձակել իւր գործունէութիւնը և իւր պահպանութեան տակ առնել Կովկասի հնութիւնները՝ կազմեց մի նոր կանոնադրութիւն, քննեց այն խմբագրական և վարչական նիստերում, միանգամայն հրաւիրելով և մի քանի ձեռնհաս անձեր, և ապա ընդհանուր ժողովի հաւանութիւնն առնելով՝ ներկայացրեց Կովկասի փոխարքային՝ հաստատութեան, որը և բարեհաճեց ներկայ տարուայ Մայիսի 16-ին հաստատել։ Առաջ բերելով այստեղ կանոնադրութիւնը՝ աւելորդ չենք համարում ասել, որ սրա գործադրութիւնը միանգամայն կախուած կըլինի ազգային ինքնաճանաչութեան գաղափարի զարգացումից։

Բնագրի վրայ գրուած է
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Ն. Կ. Մ. Փոխարքայ Կովկասի
գեներալ-ադիւտանտ
Կոմս ՎԱՐԱՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎ.

16 Մայիսի 1906 թ.
Թիֆլիս.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՀԱՑՈՑ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ընկերութեան նպատակը.

§ 1. Հայոց Ազգագրական Ընկերութիւնը հիմնւում է Թիֆլիսում։ Ընկերութեան նպատակն է ուսումնասիրել Կովկասը, նրան կից երկրները և հայկական գաղութները մասնաւորապէս ազգագրական և ընդհանրապէս մարդաբանական գիտութիւնների տեսակէտից։ Միևնոյն ժամանակ տարածել Հայ հասարակութեան մէջ մարդաբանական գիտութիւնները։

§ 2. Այս նպատակին հասնելու համար Ընկերութիւնը՝ սահմանուած կանոնները պահպանելով՝

ա) Հրատարակում է պարբերական հրատարակութիւններ, գրքեր, քարտէզներ և այլն, առաւելապէս հայերէն լեզուով։

բ) Կազմում է գիտական արշաւախմբեր և կատարում հնագիտական պեղումներ։

գ) Նպաստում է ընդհանրապէս բոլոր և մասնաւորապէս ս. Էջմիածնի և Կովկասի թանգարաններին ազգագրական մասը հաւաքստացնելու։

դ) Բաց է անում մարդաբանական գիտութիւնների դասընթացներ և կազմում է հրապարակական դասախօսութիւններ։

ե) Բաց է անում գրադարան մասնաւորապէս Կովկասագիտութեան և ընդհանրապէս մարդաբանական գիտութիւններին վերաբերեալ հրատարակութիւնների։

զ) Հոգում է և միջնորդում տեղական իշխանութիւնների առաջ՝ պահպանելու Կովկասի հնութիւնները։

է) Կազմում է Ընկերութեան անդամներից պարբերական ժողովներ, ուր կարդացւում են զե-

կուցումներ մասնաւորապէս ազգագրական և ը դհանրապէս մարդաբանական գիտութիւններին վերաբերեալ հարցերի մասին։

ը) Մրցանակներ է նշանակում արևելագիտութեան վերաբերեալ ամենալաւ ուսումնասիրութիւնների համար։

թ) Կազմակերպում է ճանապարհորդութիւններ թէ իւր անդամների և թէ ցանկացողների համար՝ երկրի և ժողովրդների հետ ծանօթացնելու նպատակով։

ժ) Կազմում է ազգագրական-երաժշտական երեկոյթներ։

§ 3. Ընկերութիւնը ունի կնիք այսպիսի վերնագրով. «Հայոց ազգագրական Ընկերութիւն», որը պահւում է Ընկերութեան գրասենեակում, քարտուղարի մօտ։

Ընկերութեան կազմը, անդամների իրաւունքները ու պարտականութիւնները.

§ 4. Ընկերութիւնը կազմում են երկու սեռի հետևեալ անդամները, որոնց թիւը չի սահմանափակւում.

ա) Պատուաւոր

բ) Աշխատակից

գ) Մշտական

դ) Գործադիր.

§ 5. Պատուաւոր անդամ ընտրւում են Ընկերութեանս մի առանձին օգտաւէտ ծառայութիւն ցոյց տուողները և մարդաբանական գիտութիւններին վերաբերեալ գիտական աշխատութիւններով յայտնի անձինք։

§ 6. Աշխատակից անդամ ընտրւում են այն անձինք, որոնք իրենց գիտական պատրաստութեամբ կարող են նպաստել Ընկերութեանս գիտական գործունէութեան։

§ 7. Մշտական անդամ ընտրւում են յօգուտ Ընկերութեան միանուագ տունուազը յիսուն ռուբլի վճարողները։

§ 8. Գործադիր անդամ ընտրւում են Ընկերութեանս նպատակներին նպաստել ցանկացողները։

§ 9. Բոլոր անդամների ընտրութիւնը կատարւում է ընդհանուր ժողովում ձայների պարզ առաւելութեամբ, միայն պատուաւոր անդամին առաջարկելու է Խորհուրդը՝ նախապէս խորհրդակցելով Խմբագրական Մասնաժողովի հետ, աշխատակից անդամին՝ Խմբագրական Մասնաժողովը, և մշտական ու գործադիր անդամներին Ընկերութեան մի որև է անդամ։

§ 10. Ընկերութեան բոլոր տեսակի անդամները օգտւում են հաւասար ձայնի իրաւունքով։

§ 11. Պատուաւոր և աշխատակից անդամները պարտաւոր չեն վճարել անդամավճար։

§ 12. Գործադիր անդամները վճարում են տարեկան երկու ր. անդամավճար։

§ 13. Երկու տարուայ ընթացքում իրենց տարեկան անդամավճարը չվճարողներն Ընկերութեան կազմից հեռացրուած են համարւում, և նորից ընտրւում են ընդհանուր կանոնների համաձայն։

§ 14. Մշտական անդամները, որ վճարել են յիսնական բուբլի, ստանում են Ընկերութիւնից երեք բուբլու գիրք, հարիւրական բուբլի վճարողները՝ վեց բուբլու, իսկ գործադիր անդամները՝ մի բուբլու։

Ընկերութեան միջոցները.

§ 15, Ընկերութեան միջոցները կազմւում են.

ա) Անդամավճարներից,

բ) Նուիրատուութիւններից,

գ) Գրքերի և պարբերական հրատարակութիւնների վաճառումից ու բաժանորդագներից։

դ) Յօգուտ Ընկերութեան տրուած երեկոյթների, համերգների, ներկայացումների, կարդացուած դասախօսութիւնների արդիւնքից և ե) Յատուկ գումարներից։

§ 16. Ընկերութեան դրամարկղը մտած բոլոր գումարները վերածւում են հիմնական, շրջանառու և յատուկ գումարների։ Հիմնական և շրջանառու գումարների քանակը որոշում է Ընդհանուր Ժողովը։

§ 17. Յատուկ գումարների գործադրութեան նպատակը կարող է փոխուել միմիայն յատկացնողի համաձայնութեամբ, իսկ եթէ կտակ է՝ մնում է անփոփոխելի։

Ընկերութեան գործերի վարումը.

§ 18. Ընկերութեան գործերը վարում են 1) Ընկերութեան անդամների Ընդհանուր Ժողովը. 2) Խորհուրդը և 3) Խմբագրական Մասնաժողովը։

Ա. Անդամների Ընդհանուր Ժողովը

§ 19. Ամէն տարի, Մարտ ամսից ոչ ուշ, Խորհուրդը հրաւիրում է Ընդհանուր Ժողով։ Բացի դրանից կարող է նաև գումարուիլ Արտակարգ Ընդհանուր Ժողով 1) Խորհրդի հայեցողութեամբ, 2) Վերաստուգիչ Յանձնաժողովի պահանջմամբ, և 3) Ընկերութեան առնուազը 10 անդամի պահանջմամբ։

§ 20. Ընդհանուր Ժողովների գրաղման առարկաները կազմում են. ա) Խորհրդի կազմած և Վերաստուգող Յանձնաժողովից վերաստուգուած անցած տարուայ դրամական հաշիւների ու Ընկերութեան գործունէութեան, ինչպէս և՝ հետևեալ տարուայ նախահաշուի, քննութիւնն ու հաստատութիւնը։

բ) Խորհրդի և Ընկերութեան անդամների Ընկերութեան գործունէութեան մասին արած առաջարկների քննութիւնը։

գ) Ընկերութեան պատուաւոր, գործադիր, և մշտական անդամների, ինչպէս և՝ խորհրդի խմբագրական, վերաստուգող և այլ մասնաժողովների և սրանց փոխանդամների և այլ պաշտօնավար անձանց ընտրութիւնը։

§ 21. Բացի սրանից, Ընդհանուր Ժողովների քննութեան և վճռին մնշուշտ ենթարկուելու են հետևեալ խնդիրները.

ա) Հիմնական գումարի ամենամեծ քանակը և այն ծախսելու որոշումը։

բ). Ընկերութեան կանոնադրութեան փոփոխումը և լրացումը ինչպէս նաև Ընկերութեան փակումը։

գ) Մասնաժողովների և տեղական ճիւղերի կազմակերպութիւնը և Խորհրդի կազմած հրահանգների և կանոնների քննութիւնը։

դ). Լիկվիդացիոնական յանձնաժողովի ընտրութիւնը։

ե). Գիտական արշաւանքներ կազմելու խնդիրը։

զ). Անշարժ կայքեր ձեռք բերելու, ծախելու և երկար ժամանակով կապալով տալու խնդիրը, և

է). Ընկերութեան նուիրուած կամ կտակած շարժական ու անշարժ կայքերի ընդունելութիւնը, առանց պայմանի, կամ մի որևէ պարտականութիւն կատարելու պայմանով և կամ այդ կայքերով ապահովուած պարտքերի ստանձնումն։

§ 22. Ընդհանուր ժողովը կայացած է համարւում, եթէ մասնակցում են Ընկերութեան թիֆլիսաբնակ անդամների $^1/_{10}$ ոչ պակաս մասը։ Իսկ եթէ այդ չափ անդամ չեն գալիս, այն ժամանակ ժողովը յայտարարւում է չկայացած և միևնոյն խնդիրների քննութեան համար հրաւիրւում է եօթ օրից ոչ վաղ նոր Ընդհանուր ժողով, որ կայացած է համարւում, քանի անդամ էլ որ գան, որի մասին անդամներին լրագիրների միջոցով նախազգուշացնւում է։

§. 23. Ընդհանուր ժողովին նախագահում է Ընկերութեան Խորհրդին և վերաստուգող մասնաժողովին չպատկանող այն անդամը, որ ընտրւում է իւրաքանչիւր անգամ առանձին քուէարկութեամբ, որ կատարւում է Ընդհանուր ժողովի հէնց բացման ժամանակ. իսկ Ընդհանուր ժողովը բաց է անում Խորհրդի նախագահը։

§ 24. Ընդհանուր ժողովներում հարցերը վճռւում են ձայների պարզ առաւելութեամբ. միայն պատուաւոր անդամի ընտրութեան, հիմնական դրամագլուխը ծախսելու, անշարժ կայքեր գնելու կամ ծախելու և Ընկերութեան գործունէութիւնը դադարեցնելու հարցերը վճռելիս պահանջւում է ձայների $^2/_3$.

Բ). Խորհուրդ

§ 25. Խորհուրդը կազմում են նախագահը, փոխ-նախագահը, գանձապահը և երեք անդամներ, որոնք բոլորն էլ ընտրւում են երեք տարով և քարտուղարը, որ միաժամանակ և Խմբագրական Մասնաժողովի նախագահն է համարւում և ընտրւում է հինգ տարով։

§ 26. Խորհրդի մի որևէ անդամի երկարատև բացակայութեան կամ հիւանդութեան, ինչպէս և ժամանակամիջոցից առաջ հրաժարուելու, դէպքերում նրան փոխարինելու համար Ընդհանուր ժողովը միևնոյն հիմունքներով, ինչպէս Խորհրդի անդամներին, ընտրում է երեք փոխ-ան-

դամներ, որոնք կատարում են Խորհրդի անդամների պարտականութիւնները մինչև առաջիկայ ընդհանուր ժողովը։

Մանօթ. Խորհրդի բացակայող անդամներին փոխարինում են փոխանդամներն ընտրութեան ժամանակ ստացած ձայների առաւելութեան կարգով։

§ 27. Ամէն տարի Խորհրդի կազմից հեռանում են ընտրութեան աւագութեան կարգով, անդամների և փոխ-անդամների մի երրորդը և նրանց տեղը ընտրւում են նոր անդամներ և փոխանդամներ։

Մանօթ. 1. Ընկերութեան բացման առաջին երկու տարիները Խորհրդի, ինչպէս և միւս մասնաժողովների, անդամներն ու փոխանդամները վիճակով են հեռանում, իսկ յետոյ հերթով։

Մանօթ. 2. Խորհրդի, ինչպէս և միւս մասնաժողովների, հեռացող անդամներն ու փոխ-անդամները կարող են վերընտրուիլ։

§ 28. Խորհրդի անդամները փոխադարձ համաձայնութեամբ բաժանում են իրենց մէջ Ընկերութեան վերաբերեալ իրենց պարտականութիւնները։

§ 29. Խորհրդի քննութեան են. թարկուած բոլոր հարցերը վճռւում են բաց քուէարկութեամբ ձայների պարզ առաւելութեամբ, բայց Խորհրդի ներկայ եղող որևէ անդամի առաջարկով խնդիրները կարող են վճռուել և՛ գաղտնի քուէարկութեամբ։ Խորհրդի մէջ ձայները հաւասար բաժանուելիս նախագահողի ձայնը առաւելութիւն է տալիս։

§ 30. Խորհրդի նիստերը կայացած են համարւում, եթէ որ ներկայ են անդամների առնուազը կէսը։

§ 31. Խորհրդի նախագահը և փոխ-նախագահը հանդիսանում են Ընկերութեան ներկայացուցիչը նրա կառավարչական և հասարակական հիմնարկութիւնների, ինչպէս և՛ կողմնակի անձինքների հետ ունեցած յարաբերութիւնների ժամանակ։

Մանօթ. Բացի նախագահից Ընկերութիւնը կարող է ունենալ նաև պատուոյ նախագահ։

§ 32. Խորհրդի պարտականութիւններն են.

ա) Ընկերութեան բոլոր գործերի վարումը և բոլոր շարժական ու անշարժ կայքերի հսկողութիւնը։

բ) Ընդհանուր ժողովների բոլոր որոշումների կատարումը։

գ) Ընկերութեան պատկանող բոլոր գումարների ընդունելութիւնը՝ պահպանութիւնը և ծախսելը։

դ) Ընկերութեան նուիրուած շարժական և անշարժ կայքերի ընդունելութեան մասին Ընդհանուր Ժողովի որոշման կատարումը։

ե) Ընկերութեան համար անհրաժեշտ բնակարանների և ծառայողների վարձելը։

զ) Ընկերութեան հաշիւների վարումն և անդամների անուանացուցակի կազմելը։

է) Ընկերութեան տեղական ճիւ-

ղերի բանալու մասին եղած առաջարկի քննութիւնը, դրա հաստատութեան մասին Ընդհանուր Ժողովին առաջարկելը։

ը) Ընկերութեան անդամների արած առաջարկների քննութիւնն ու որոշումը։

Տանօթ. Ընկերութեան անդամների արած առաջարկների և հարցումների վերաբերութեամբ եթէ Խորհուրդը չկարողացաւ բաւարարութիւն տալ, պէտք է զեկուցանէ առաջիկայ Ընդհանուր Ժողովին։

թ) Խմբագրական Մասնաժողովի ընտրած աշխատութիւնների, ինչպէս և՝ պարբերական հրատարակութիւնների, տպագրութիւնը, նրանց դին նշանակելը, գրավաճառների հետ պայմանաւորուելը, նաև աշխատութիւնների վարձատրութեան վերաբերմամբ Խմբագրական Մասնաժողովի հետ կոպարներ կազմելը։

ժ) Ընկերութեան գործունէութեան տարեկան հաշուի, ինչպէս և առաջիկայ տարուայ նախահաշուի, կազմելը և Ընդհանուր Ժողովի հաստատութեան առաջարկելը։

Գ. Խմբագրական Մասնաժողով.

---

§ 33. Խմբագրական Մասնաժողովը բաղկանում է նախագահից, փոխ-նախագահից, քարտուղարից և երեք անդամներից։

Տանօթ. Խմբագրական Մասնաժողովի անդամներին, որոնք ընտրւում են Ընդհանուր Ժողովից երեք տարով, բացակայութեան դէպքերում փոխարինելու համար ընտրւում են երեք փոխանդամներ։

Խմբագրական Մասնաժողովը՝

ա) Խմբագրում է Ընկերութեան պարբերական հրատարակութիւնները և քննում է առանձին գրքերով լոյս տեսնելիք աշխատութիւնները։

բ) Որոշում է հեղինակներին և աշխատակիցներին տրուելիք վարձատրութեան չափը, առաջնորդուելով Խորհրդի հետ դրա համար կազմած կոպարներով։

գ) Կազմում է գիտական արշաւախմբեր, կատարում հնագիտական պեղումներ։

դ) Նպաստում է ս. Էջմիածնի, Կովկասեան և այլ թանգարանները հարստացնելու։

ե) Բաց է անում և կառավարում է մարդաբանական գիտութիւնների դասընթացներ, կազմում է դասախօսութիւններ։

զ) Կառավարում է գրադարանը։

է) Կազմակերպում է Ընկերութեան անդամներից պարբերական ժողովներ, ուր կարդացւում են զեկուցումներ մասնաւորապէս ազգագրական և ընդհանրապէս մարդաբանական գիտութիւններին վերաբերեալ հարցերի մասին։

ը) Քննում է մրցանակաբաշխութիւնների համար ներկայացրուած աշխատութիւնները կամ

յանձնարարում ուրիշ կարող անձերի։

թ) Կազմակերպում է ճանապարհորդութիւններ թէ Ընկերութեան անդամների և թէ ցանկացողների համար։

ժ) Խմբագրական Մասնաժողովը միանգամայն անկախ է իւր գիտական գործունէութեան մէջ, միայն տնտեսականի վերաբերմամբ կամ պիտի սահմանափակուի նախահաշուով, կամ պիտի դիմէ Խորհրդի համաձայնութեան, իսկ ծանրակշիռ խնդիրներում պէտք է խնդրէ Ընդհանուր Ժողովի համաձայնութիւնը։

Դ. Վերաստուգող Ցանձնաժողով.

§. 34. Տեղեկագիրը վերաստուգելու համար տարեկան Ընդհանուր Ժողովը Ընկերութեան մի որևէ պաշտօնի մէջ չլինող անդամներից ընտրում է Վերաստուգող Ցանձնաժողով մի տարի ժամանակով, բաղկացած առնուազը երեք անդամից։ Այս Ցանձնաժողովին իրաւունք է տրւում տարուայ ընթացքում վերաքննել հաշուեմատեանները, վաւերաթղթերը, դրամարկղը և կայքը։ Անցած տարուայ տեղեկագրի վերաստուգման մասին Ցանձնաժողովը իւր նկատողութիւնները ներկայացնում է Ընդհանուր Ժողովի հայեցողութեան։

Պաշտօնական անձինք.

1) Խորհրդի նախագահ.

§ 35. Խորհրդի նախագահը՝

ա) Հրաւիրում է ընդհանուր ժողովներ և Խորհրդի նիստեր.

բ) Նախագահում է Խորհրդի նիստերին.

գ) Ընկերութեան անունով յարաբերութիւն է ունենում հաստատութիւնների և անձերի հետ։

§ 36. Նախագահին իրաւունք է տրւում անյետաձգելի կարիքների ժամանակ յատկացնել մինչև հարիւր ռուբլի ծախսելու, այն պայմանով միայն, որ այդ յատկացման պատճառների մասին զեկուցանուի Խորհրդի առաջիկայ նիստում։

2) Խորհրդի փոխ-նախագահ.

§ 37. Խորհրդի փոխ-նախագահը միշտ մասնակցում է Խորհրդի նիստերին և նախագահի բացակայութեան դէպքում նրան փոխարինում։

Ընկերութեան քարտուղար, նոյն ինքն եւ Խմբագրական Մասնաժողովի նախագահ.

§ 38. Խմբագրական Մասնաժողովի նախագահը՝

ա) Նախագահում է Խմբագրական Մասնաժողովին և մասնակցում Խորհրդի նիստերին, իբրև նրա քարտուղարը.

բ) Զեկուցանում է Խորհրդին Խմբագրական Մասնաժողովի որոշումները.

գ) Վարում է դիւանական գործերը, պահում է գրութիւնները. ընդունում և վարում է Ընկերութեան թղթակցութիւնները, վերահսկում գրադարանի վրայ։

դ) Նախագահում է գիտական երեկոներին։

§ 39. Դիւանական և այլ մանր ծախսերի համար Խմբագրական Մասնաժողովի նախագահին տրրւում է Ընկերութեան գանձարանից մինչև յիսուն բուբլի, որի ծախսելու մասին նա հաշիւ է ներկայացնում Խորհրդին։

§ 40. Խմբագրական Մասնաժողովի փոխ-նախագահը մասնակցում է Խմբագրական Մասնաժողովի նիստերին և փոխարինում նախագահին՝ նրա բացակայութեան ժամանակ։

§ 41. Գրաւոր աշխատանքները կատարելու և արձանագրութիւնները կազմելու համար Խորհրդի նախագահի որոշմամբ կարող են հրաւիրուել մի կամ երկու գործավար։

Գանձապահ.

§ 42. Ընկերութեան գանձապահը՝

ա) Վերահսկում է Ընկերութեան կապիտալի վրայ, ընդունում է անդամներից անդամավճարներ, Խորհրդի որոշմամբ կատարում է անհրաժեշտ ծախսերը, պահում է Ընկերութեան առձեռն գումարները Ընկերութեան դրամարկղում և պատասխանատու է նկատւում նրանց պահպանութեան վերաբերմամբ.

բ) Վարում է Ընկերութեան հաշիւները հաշուապահական կանոնաւոր ձևով և գտնւում է Խորհրդի երկու անդամի մշտական հսկողութեան ներքոյ.

գ) Մասնակցում է Խորհրդի նիստերին ձայնի իրաւունքով։

§ 43. Բացակայելու կամ հիւանդութեան դէպքում գանձապահը գրաւոր կերպով յայտնում է այս մասին Խորհրդին և սրա որոշմամբ յանձնում հաշուեմատեանները, դրամարկղը և վաւերաթղթերը Խորհրդի անդամներից մինին։

Տեղական ճիւղեր

§ 44. Տեղական ճիւղերը բացւում են առնուազը 5 անդամի Խորհրդին տուած խնդրի համաձայն և Ընդհանուր ժողովի հաստատմամբ։

§ 45. Տեղական ճիւղերը բացւում են գլխաւորապէս տեղական հնութիւնների պահպանութեան վրայ անմիջապէս հսկելու, տեղական ազգագրական և հնագիտական նիւթեր ու իրեր հաւաքելու, գիտական ճանապարհորդներին և Ընկերութեան կազմակերպած արշաւանքներին ու զբօսանքներին առաջնորդելու նպատակով։

§ 46. Տեղական ճիւղերը իրենց անդամների ընդհանուր ժողովից ունտրում են Վարչութիւն 3—5 անդամից և 2 փոխանդամից։ Սրանք իրենց միջից ընտրում են նախագահ, գանձապահ և անդամ քարտուղար։

§ 47. Այս տեղական ճիւղերը առաջնորդուելով Ընկերութեանս կանոնադրութեամբ, կազմում են նախահաշիւ, քննութեան ենթարկում տեղական ընդհանուր ժողովում և ապա Խորհուրդի միջոցով ներկայացնում

կենդրոնական Ընդհանուր Ժողովին՝ հաստատութեան։

§ 48. Տեղական ճիւղերի հաւաքած նիւթերը և իրերը, ինչպէս և՝ դրամական գումարները ուղարկուում են Խորհրդին։

§ 49. Տեղական ճիւղերի նախագահները կարող են մասնակցել Խորհրդի նիստերին, ունենալով ձայնի իրաւունք իրենց տեղական հարցերի վերաբերութեամբ։

§ 50. Տեղական ճիւղերի հաւաքած նիւթերը և կատարած ուսումնասիրութիւնները հրատարակուում են Ընկերութեան միջոցներով Խմբագրական Մասնաժողովի քննութեամբ։

Գիտական զրոյցներ

§ 51. Գիտական զրոյցներ լինում են պարբերաբար որոշ օրեր, սեպտեմբերից մինչև մայիս։

§ 52. Եթէ մի որև է անդամ ցանկանում է մի բեֆերատ կարդալ, այդ մասին նախապէս յայտնում է Խմբագրական Մասնաժողովին, և եթէ սա այդ գտնում է Ընկերութեան գործունէութեան ծրագրին համապատասխան, նշանակում է զրոյցի օրը և հրաւիրում Ընկերութեան բոլոր անդամներին ծանուցանելով նրանց բեֆերատի նիւթի մասին լրագրների միջոցով։

§ 53. Վիճաբանութիւնները կառավարում է Խմբագրական Մասնաժողովի նախագահը կամ փոխնախագահը, իսկ սրանց բացակայութեան դէպքում Մասնաժողովի ընտրութեամբ իւր անդամներից մինը։

§ 54. Գիտական դասախօսութիւններից անկախ, Խորհրդի որոշմամբ, տարուայ ընթացքում նշանակուում են շաբաթական մի կամ մի քանի օր, երբ Ընկերութեան անդամները կարող են հաւաքուել Ընկերութեան բնակարանը՝ գիտական զրոյցների համար։

Դասախօսութիւններ եւ Ընթերցումներ.

§ 55. Ընկերութեան անդամների և կողմնակի անձանց իրենց մասնագիտութիւնը լրացնելու նպատակով Խորհուրդը Խմբագրական Մասնաժողովի առաջարկով հրաւիրում է դասախօսներ, դասախօսութիւնների և ընթերցումների համար։

§ 56. Խորհուրդը բանակցում է դասախօսների և ընթերցողների հետ և որոշում թէ նրանց տրուելիք վարձատրութիւնը և թէ ունկնդիրներից պահանջուող վճարը։

Մրցանակներ.

§ 57. Կովկասի, սրան կից երկրների, ինչպէս և հայկական գաղութների ուսումնասիրութիւնը քաջալերելու համար Ընկերութիւնը մրցանակներ է նշանակում ամենալաւ աշխատութիւնների համար։

§ 58. Մրցանակաբաշխութեան երկերը քննելու համար, բացի Խմբագրական Մասնաժողովի անդամներից, կարելի է հրաւիրել նաև այլ մասնագէտներ։

Գիտական արշաւանք

§ 59. Գիտական արշաւանք կատարել ցանկացողները գրաւոր կերպով դիմում են Խմբագրական Մասնաժողովին։

§ 60. Խմբագրական Մասնաժողովը, եթէ յարմար համարէ, առաջարկում է Խորհրդին որոշելու և տալու գիտական արշաւանքների համար նախահաշուով յատկացրուած գումարից հարկաւորուած ծախսը։

§ 61. Գիտական արշաւանք կատարողին տրւում է Խորհրդի և Խմբագրական Մասնաժողովի նախագահների ստորագրութիւնը կրող մի վկայական, ուր նշանակւում է արշաւանքի նպատակը և ժամանակամիջոցը։

Ընկերութեան փակումը

§ 62. Եթէ մի որևէ պատճառով Ընկերութիւնը փակուի, նրա ամբողջ շարժական և անշարժ կայքերն ու կապիտալները մնալու են ս. Էջմիածնի թանգարանին՝ նոյն նպատակով գործադրելու։